

նիւթ եւ անմահ» քաջատրութիւնը հակա-
սութիւն մը չէ՞ ամէն ինչ նիւթի վերածող
Եղիայի համար:

Անհաւատ մը, բողոքող մըն է թէեւ իր
Աղօթք տիտղոսութեամբ (Թէոքրիկ. Ամէնուն
Տարեց. 1915. 240) երգին վերջին տան
մէջ, բայց «Մեղայ» ու մը զղջական ար-
տայայտութիւն կու տայ իր յանդուգն
մտածութեան.

Այլ... խի'ց ականջդ, ո'ւ չընտակ...

Ոսկե'րք եւ ոսկերք... Ո'ւ Եղեկիէլ...:
Երբ կեանքն ի կրմախ հանուր վերածուի,
Բարձրելոյն ի փոս ձայն պիտի հասնի.
« Հասած է մեծ օրն, ե'լ, կանգնէ', մեռել' »:

Հրամանաց վերին ընդդէմ մի մեռել
Պիտի անսաստէ': Փայտ իր փակ ճաղի
Յրցուումն երկնից դէմ ահե'ղ տի կանգնի:
Յարութեան ընդդէմ յաւիտեան մեռել:

Փափուկ ըզգացմամբք սիրտ մը յար զեղուն,
Հանճար երկնաթռիչ իբր արծուի թռչուն,
Հըրատենչ մարմին թրթռուն իբրու քնար,

Ձայն ապրեցընես փակ ի խուց փրտուն,
Կեանքն ողջոյն, Աստուած, հայր անապոյտ:
Հոտած դադաղս, արդ, քեզ յաւատ բուրվառ:

Յանդուգն շեշտ կայ այս քերթուածին
մէջ, դայրացած հոգի մը, դառն ու կըր-
քոտ արտայայտութիւն մը, որ իր վերջին
տողովը կը դառնայ նոյնիսկ հայհոյու-
թիւն: Եղիա կը պայքարի կեանքի վերա-
նորոգութեան դադափարին դէմ: Յաւի-
տեան մեռել մը ինքը լուսաւոր եւ նորոգ-
ուած մարմիններու երամին մէջ, եւ ին-
չո՞ւ: Եղիա իսկ չի գիտեր թէ ինչո՞ւ կը
ցանկայ այսպէս: Տփուհ, յուսահատ,
լքուած, յաւատ տառապած բանաստեղծն է
ինքը, որ չունի հանգիստ՝ բայց եթէ անէ-
ութեան մէջ: Յարութիւնը վերադարձ մըն
է դէպի կեանքը, անշուշտ ոչ մարմնակա-
նը. սակայն Եղիա յարութեան դադափա-
րին մէջ տեսնելով ցաւին վերսկսումը, կը

Ես ըսեմ, դուն ո'չ մի' լսեր.
Երկինքն յաւատ դըտայ դատարկ...
Ունայն Աստուած, եւ ունայն սէր...
Մեղա'յ Տէր:

Ըմբռնա յարութիւն (կամ Բուրվառ -
Դագաղս. Թէոքրիկ. Ամէնուն Տարեցոյցը.
1913. 16) ուրիշ երգ մըն է, ուր բանա-
ստեղծը կ'ըմբռնատանայ մեռելներու յա-
րութեան դադափարին դէմ.

(9)

Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ

Լ Ո Ւ Ի Փ Ա Ս Տ Է Օ Ռ

(1822 - 1895)

ԻՐ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

(Շար. Բազմ. 1954, թիւ 11-12, էջ 272)

Փաստէօնի հանճարը տակաւին ուրիշ
բարիքներ եւս պիտի սփռէր մեզի օգտա-
կար շարք մը կենդանիներու ընտանիքին
մէջ: Հաւերը, խողերը եւ շուններն ալ պի-
տի օգտուէին անկէ:

Հաւերն ալ ենթակայ են մահացու հի-
ւանդութեան մը, որ հաւերու ֆոլեռայ կը
կոչուի:

Երբ այս հիւանդութիւնը բոյն դնէ հաւ-
նոցներու մէջ, անոնց բնակչութեան 90%
տոկոսը կը վարակուի ու կը մեռնի:

Հիւանդ հաւը իր կայտառութիւնը կը
կորսնցնէ, այլեւս ոչ կը քալէ եւ ոչ ալ իր
չըջապատովը կը հետաքրքրուի, ինքնիր
վրայ կծկուելով՝ փետուրները կը ցցէ,
գլուխը կը կախէ, աչքերը կը դոցէ ու խոր
թմբիւրի մը մէջ կը թաղուի, որուն կը յա-
ջորդէ մահը: Փաստէօն այս հիւանդու-
թիւնն ալ ուսումնասիրելով, կը յաջողէր
հիւանդ հաւերու արեան մէջ գտնել ախ-
տածին մանրէն, որուն միջոցով փրկարար
պատուաստն ալ կը պատրաստէր:

Խողերն ալ ունէին իրենց մահացու հի-
ւանդութիւնը՝ ռուժէ կոչուածը. Փաս-
տէօն՝ անասնաբոյժի մը խնդրանքներուն
հետեւանք տալով, այս հիւանդութեան ալ
մանրէն ու պատուաստը կը գտնէր:

Փաստէօնի գիւտերը այնքան լայն հո-
րիզոններ բացած էին, որ այլեւս զմայլելի
ներդաշնակութեամբ մը նորոյթները մէ-
կը միւսին կը յաջորդէին:

Մանրէներու գոյութիւնը քողագերծ-
ուելէ ետք, ամէնէն աւելի բժշկութիւնը
ներշնչուել սկսաւ Փաստէօնի գիւտերէն:

Նախ քան Փաստէօն, մայրանոցներն ու
հիւանդանոցները, օգտակար հաստատու-
թիւններ ըլլալէ աւելի, կատարեալ սպան-
դանոցներ էին. հոն ապաստանողներէն
չատ քիչերուն վիճակուած էր ողջ առողջ
դուրս ելլել: Պարզապէս թարախի եւ փը-
տութեան մահացու որջեր էին, որոնք հա-
րիւր հազարաւոր մարդերու կեանքը կը
խլէին:

Մասնաւորապէս պատերազմներու ըն-
թացքին, հէզ վիրաւորները ճանճերու պէս
կը մեռնէին, այն աստիճանի՝ որ պատե-
րազմներու դաշտէն աւելի հիւանդանոցնե-
րու փտութիւնն էր որ կը փճացնէր բա-
նակներու զինուորական ոյժին մեծագոյն
մասը:

Այդ դոյաւիճակին գլխաւոր պատաս-
խանատուները նոյնինքն բժիշկներն էին.
անոնք էին որ իրենց աղտոտ ձեռքերով ու
գործիքներով, առանց պահ մը իսկ տա-
րակուսելու, մահացու մանրէներ կը փո-
խադրէին ու մահուան ամենահաւատարիմ
զինակիցները կը դառնային:

Փաստէօն ահազանգը հնչեցնելով, բը-
ժիշկներն ու վիրաբոյժները իրենց թմբի-
րէն կ'արթնցնէր. անոր գիւտերովն ու ճի-
գերովն էր որ կը յայտնաբերուէր մանրէ-
ներու չարաբաստիկ գոյութիւնը. ան էր
որ կը սորվեցնէր բժիշկներուն, թէ ինչ-
պէս պէտք էին խնամել վէրք մը, թէ ինչ-
պէս վիրաբոյժը պէտք էր մաքրել իր ձեռ-
քերն ու գործիքները:

Փաստէօնով՝ նոր ու բեղնաւոր դարա-
չըջան մը կը սկսէր բժշկութեան համար,
այլեւս չնորհիւ իր վարդապետութեան՝
կարելի կը դառնար, առանց վախի, հի-
ւանդի մը փորը բանալ, անոր փորտիքը
ժամերով տակն ու վրայ ընել, ամենա-
յանդուգն գործողութիւններ կատարել:

Փաստէօնի քարոզած հակաանխաւան
միջոցները կիրարկելով, կարելի կը դառ-
նար ճակատաբաց յայտարարել՝ թէ վի-
րաբոյժին ձեռքով բացուած ամենամեծ

վերջին իսկ դատապարտում էր եօթը օրէն գոցուելու, առանց կաթիլ մ'իսկ թաւախ արտադրելու:

Մեծահամբաւ անդղիացի վիրաբոյժ մը՝ Լիւթըն, 1874-ին նամակ մը կը գրէր Փաստէօնին, որուն պարունակութիւնը այլևս պատմութեան մաս կը վաղմէ: Մենք պիտի գոհանանք անկէ փոխ առնել հետեւեալ գեղեցիկ հատուածը. « Թոյլ տուէ՛ք ինձ, այս առիթէն օգտուելով, Ձեզի սրտազին շնորհակալութիւններս յայտնել՝ Ձեր փայլուն պրպտութիւններովը, նեխումի մանրէներուն տեսութիւնը ապացուցած ու ինձ սորվեցուցած ըլլալնուդ համար: Անոր շնորհիւ՝ կարելի եղաւ ինձ կիրարկել հակաանխումբի դրութիւնը: Եթէ երբեք էտիմպուրի գալու առիթը ունենաք, ինձ կը թուի թէ Ձեզի համար լաւագոյն վարձատրութիւնը պիտի ըլլայ՝ ակնատես ըլլալ մեր հիւանդանոցին մէջ, թէ ինչպիսի լայն սահմաններու մէջ մարդկային ցեղը օգտուած է Ձեր գիտելիքէն: Պէտք կ'այ ըսելու, թէ ո՞րքան մեծ գոհունակութիւն պիտի զգամ Ձեզի ցուցնելով այն ամէնը՝ որ վիրաբուժութիւնը Ձեզի կը պարտի »:

Փաստէօնի կը պարտին իրենց կեանքը անթիւ ու անհամար մայրեր. իրմէ առաջ յղութիւնն ու ծննդաբերութիւնը սարսափազդեցիկ ահաւոր երեւոյթներ էին, որոնց հետեւանքով իզական սեռը բիւրաւոր դոհեր կու տար:

Փաստէօն, ծննդաբերութիւններէ ետք յառաջ եկած բարդութիւնները ուսումնասիրելով, յաջողած էր ստուգել թէ՛ անոնք հետեւանքն էին ստրեստոկով կոչուած, համրիչի ձեւով խմբուած մանրէներու գոյութեանը:

Օր մը, այդ բարդութեանց մասին, մանկաբարձ մը այնպիսի արտառոց դաժաւարներ կը յայտնէր Բժշկական Կաճառի ամպիոնէն, որ Փաստէօն չկրցաւ ինքզինքը զսպել, տեղէն ցատկեց բացադանջելով. « Ձեր բաժնէն ոչ մէկն է ծննդ-

դականներու հիւանդութեանց պատճառը: Բժշկութիւնն ու իր սպասարկուներն են որ հիւանդութիւնը՝ հիւանդ կնոջմէ մը կը փոխանցեն առողջին »:

Բանախօսը դայրացած կը պատասխանէր, թէ շատ կը տարակուսի որ երբ եւ իցէ կարելի ըլլայ այդ հիւանդութեան մանրէն դնել:

Փաստէօն դրատախտակին մօտենալով՝ ստրեստոկով-ին ձեւը նկարելով կ'աղաղակէր. « Ահաւասիկ անոնց պատկերը »:

Այս անգամ ալ Փաստէօն չէր սխալած: Ան, հակառակ իր յառաջացած տարիքին, վերջին բարիք մը, թանկադին կտակ մը եւս ունէր նուիրելիք մարդկութեան:

Յաճախ առիթը ունեցած էր ակնատես ըլլալու կատղած շուներէ խածուած մարդոց ահաւոր տառապանքին եւ հոգեվարքին:

Պէտք էր ուսումնասիրել այդ հիւանդութիւնը, պէտք էր անոր ալ դարման մը, ճար մը գտնել: Փաստէօն այդ հիւանդութիւնն ալ իր բեղնաւոր հանձարին փորձարկութեանը կ'ենթակէր:

Կարժէ որ նախ թուուցիկ ակնարկ մը նետենք, մօտակայ անցեալին մէջ կատաղութեան մասին տիրող դաժաւարներուն եւ կիրարկուած դարմանումներուն վրայ:

Նախ քան Փաստէօն, հիւանդութեան պատճառին մասին որոշ դաժաւար մը գոյութիւն չուէր: Միայն սա չափը յայտնի էր որ կատղած շուներն էին, որ մարդիկը խածնելով հիւանդութիւն մը կը փոխանցէին: Բացի ատկէ, մարդիկ գիտէին, թէ կատղած շան լորձոնքովն էր որ արտաւորումը տեղի կ'ունենար, եւ հիւանդութիւնը երեւան կ'էլլէր շատ ուշ՝ մօտաւորապէս խածուածքէն ամիս մը ետք: Գալով դարմանումին՝ մէկը միւսէն աւելի արտառոց միջոցներ վր դործածուէին, առանց դրական որ եւ է օգուտի:

Հինուց ի վեր սովորութիւն դարձած էր, Հիւսկէն անունով սուրբի մը հրաշագործութեանը գիմել: Կատղած շունէ

խածուողները Պելճիքա կը փութային ու կը դիմէին յայտնի վանականներու, որոնց քով իբր թէ այդ սուրբին հաղուստներէն կտորներ կը դառնուէին: Քահանան, շունէ խածուողին ճակտին վրայ փոքրիկ վէրք մը բանալէ ետք, սուրբ Հիւսկէնի գործածած կերպասէն թել մը կը դնէր:

Նոյնպէս մեծ կարեւորութիւն կու տային ծովու լողանքի բարերար աղբեցութեանը, ինչպէս նաեւ ոստրէի պատեանի փոշիով պատրաստուած ձուածեղին: Բայց ամէնէն աւելի, տաք երկաթով կամ որոշ դեղերու աղբեցութեամբ կատարուած խարումն էր որ սովորաբար կ'օգտագործուէր:

Այս սնտուի դարմանումներու կողքին, ինչպէս որ առիթը ունեցանք յիշատակելու, կար ուրիշ մըն ալ՝ որ իր բարբարոսութեամբը կը դերազանցէր միւսները: Դարմանումէ աւելի՝ վայրագ բարքեր էին, որոնց միջոցով ամենախժդուժ չարչարանքներու գնով կը մեռցնէին հէզ հիւանդը, անոր անդամները կտրտելով, ներքնակներու տակ խեղդամահ ընելով:

Մեր մէջ ալ, դաւառները, կատղածը՝ սենեակի մը մէջ կ'արգելափակէին, ու լուսամուտէ մը վրան մօտիւր կը թափէին, մինչեւ մեռնիլը:

Ասոնք առասպելներ չեն, այլ իրականութիւններ, որոնք ի զօրու պէտք է ըլլային մինչեւ 1810, նկատի ունենալով որ բարեգութ անձ մը, այդ թուականին Փրանսական կառավարութեան կը դիմէր, հետեւեալ, առաջարկին օրէնքի կշիռով տալու համար:

« Մահուան պատիժով արգիւտուած է խեղդել, խեղդամահ ընել, անդամներու երակները բանալով արիւնաքամ ընել, կամ ուրիշ որ եւ է ձեւով մեռցնել կատաղութեան վարակուած մէկը »:

Ահա՛ թէ Փաստէօն, 1880-ին, ինչպիսի անհրապոյր տեսիլքով պարուրուած հիւանդութեան մը ուսումնասիրութեանն ու դարմանումին կը լծուէր:

Նախ՝ բարեկամ անասնաբոյժի մը կը դիմէր, խնդրելով որ առաջին առիթով իրեն տրամադրէ կատղած շուն մը:

Ճիշտ այդ օրերուն, բարեկամ բժիշկ մը իրեն լուր կու տար որ կատաղութեան վարակուած երեխայ մը կը դարմանէր, ու կ'առաջարկէր միասին տեսնել այդ հիւանդը:

Հէզ երեխան, տեւականօրէն ջղային գրգիռներու, կծկումներու, ցնցումներու, դալարումներու եւ սարսափելի դառանցանքներու ենթակայ էր:

Իր պոռչտութիւնովն ու բարկութեան նոպաներովը կը դժբախտէր սենեակը, ու հակառակ զինքը տառապեցնող բոլորն պապակին՝ կաթիլ մը ջուր իսկ չէր կրնար կուտալ իր ծարաւը յագեցնելու համար: Ահա այս ահաւոր տառապանքներուն մէջն էր որ երեխան կը մեռնէր:

Փաստէօն առիթէն օգտուելով, մեռած երեխային լորձոնքը ճաղարներու կը ներարկէր, անոնք 36 ժամէն կը մեռնէին, առանց կատաղութեան որ եւ է նշան յայտնաբերելու: Այս անգամ, այդ մեռած կենդանիներուն շողիքը օգտագործելով, դարձեալ ճաղարներու կը ներարկէր, ասոնք ալ 36 ժամէն կը մեռնէին:

Այս փորձերու ընթացքին, իր բարեկամ անասնաբոյժը կը յաջողէր կատղած շուն մը տրամադրել:

Շունին վանդակը բանալով, կատղած կենդանին բակը կը հանէր, ու միջին պարանի հանգոյց մը նետել տալով անշարժութեան մատնել կու տար: Փաստէօն՝ ապակիէ բարակ ձող մը բերնին դրած, կը մօտենար շունին, կը կքէր անոր վրայ, ու այդ ձողովը կը ծծէր կենդանիին լորձոնքը:

Այս տեսարանը որքան յուզիչ՝ նոյնքան ալ տպաւորիչ էր իր վեհութեամբը. ան՝ պատկերալից կերպով կը մարմնացնէր երկու մեծ ուժերու, հանճարին ու մահուան՝ ճակատ ճակատի բախումն ու անողոք պայքարը:

Երբ շուրջինները Փաստօտին դիտել կու տային թէ պէտք էր զգոյշ ըլլալ ու այդքան խիղախօրէն չվտանգել իր կեանքը, ան անայլայլ կերպով կը պատասխանէր. «Ի՞նչ փոյթ, ճշմարիտ ու վեհ կեանքը՝ վտանգին մէջ ապրուածն է, զոհարելութեան եւ բարի օրինակի կեանքն է որ արդաւանոր կը դառնայ»:

Փաստօտ, վերոյիշեալ պայմաններուն մէջ սրուակ մը լորձուկէ հաւաքելէ անմիջապէս ետքը ճաղարներու ներարկումներ ընելու կը ձեռնարկէր:

Այս անգամ ալ, 36 ժամ չանցած, բոլորն ալ կը մեռնէին: Կենդանիներուն վաղահաս մահը Փաստօտի ուշադրութեան մասնաւոր առարկան կը դառնար: Անոր զարմանք կը պատճառէր որ փորձի կենդանիները այդքան շուտով կը մեռնէին, մինչդեռ կատաղութիւնը՝ վարակումէն ամիս մը ետքը երեւան ելլող հիւանդութիւն մըն էր:

Այս կէտը նկատի ունենալով, Փաստօտ արդարացիօրէն կ'եղբակացնէր, թէ այդ կենդանիներուն մահուան պատճառը ոչ թէ կատաղութեան ժահն էր, այլ պարզապէս անոնց բերին մէջ գտնուող այլազան ու մահացու մանրէներու ազդեցութիւնը:

Փաստօտ ստուգելու համար իր այս համոզումը, առողջ մարդոց ու կենդանիներու լորձուկէ կը ներարկէր ճաղարներու, որ այս պարագային ալ, կենդանիները 36 ժամէն կը մեռնէին: Այս անգամ, կատաղութեան մանրէն կը փնտռէր, բայց այս ուղղութեամբ թափած բոլոր ճիգերը ապարդիւն կ'անցնէին:

Փաստօտ խիստ արդարօրէն այն համոզումը կը գոյացնէր, թէ կատաղութեան մանրէն անտեսանելի տեսակէն էր, որ է բնի վիռիւսներու կարգին կը պատկանէր: Արդարեւ, ներկայիս մինչեւ իսկ, այդ մանրէն տակաւին տեսնել կարելի չէ եղած:

Փաստօտի հանճարը պահ մը կանդ կ'առնէր այս մեծ խոչընդոտին առջեւ: Ան ուշի ուշով կը զննէր կատաղութենէ վարակուած մարդոց եւ կենդանիներու ցուցադրած ախտային երեւոյթներն ու արտայայտութիւնները:

Պրկումները, դալարումները, շնչելու դժուարութիւնները, ինչպէս նաեւ անդամալուծութեան երեւոյթները բացայայտ կերպով ցոյց կու տային, թէ կատաղութեան անտեսանելի մանրէին ժահը մասնաւորապէս ջղային դրութեան վրայ էր որ իր աւերները կը դործէր:

Որով, այս անգամ կը խորհէր ուղղակի ջղային դրութեան մէջ փնտռել ախտածին մանրէն: Դժբախտաբար հոգ ալ մանրէն կը բացակայէր:

Այլեւս Փաստօտ բացարձակ համոզում մը կը գոյացնէր՝ թէ կատաղութեան մանրէն վիռիւս մըն է:

Այս համոզումին համընթաց, Փաստօտի համար նոյնքան անառարկելի երեւոյթ մըն էր, թէ այդ մանրէն պէտք էր որ հիւանդներու ջղային դրութեան որ եւ է մէկ մասին մէջ գտնուէր:

Այս տեսակէտը ուղեցոյց առնելով, կատաղութենէ մեռած շան մը ողնուղեղէն կտոր մը կ'առնէր, ու հակաանխիչ ամէն տեսակի միջոցներ ձեռք առնելէ ետք, թորացեալ ջուրի մէջ կը հալեցնէր:

Ան կը խորհէր թէ այդ լուծոյթը փոխանակ կենդանիներուն մորթին տակ ներարկելու, եթէ ուղղակի անոնց ուղեղին մէջ ներմուծելու ըլլար, ախտաւորման եւ ախտերեւման միջեւ գոյութիւն ունեցող երկարատեւ ժամանակամիջոցը՝ որուն տեսողութիւնը մէկ ամիս է՝ զգալիօրէն կրճատել կարելի պիտի ըլլար:

Փաստօտ այս միջոցը յանձնարարելով հանդերձ՝ խղճի խայթ կը զգար փորձի ենթարկուելիք կենդանիներուն հանդէպ, ու անոր դործադրութիւնը իր աշակերտներէն՝ Տոբթ. Ռուի կը յանձնէր:

Ան չուղեց մինչեւ իսկ ներկայ գտնուել

այդ դործողութեան: Տոբթ. Ռու քանի մը շուներ եւ ճագարներ ԲՈՒՈՒՓՈՐԱՎ-ով զգալազուրկ ընելէ ետք, բարակ դործիքով մը կը ծակէր անոնց դանկը, եւ ուղեղին մէջ կը ներարկէր կատաղած շան մը ողնուղեղին լուծոյթը:

Փաստօտ ի տես այդ խեղճ կենդանիներուն, չէր դիտեր թէ ինչպէս պէտք էր արտայայտել անոնց հանդէպ զգացած դուժն ու երախտիքը: Մի առ մի կը շոյէր, կը սիրէր, ու շաքարով եւ համեղ կերակուրներով կը հոգար դանոնք:

Յանուն տառապող մարդկութեան, դիտութեան եւ յառաջադիմութեան համար, այդ կենդանիներուն պարտադրուած դրժխեմ ճակատագիրը ներելի կը դառնար, երբ պահ մը նկատի ունենանք այն մեծ բարիքները, որ Փաստօտ ու իր յաջորդները մատուցին ո՛չ միայն մարդկային ցեղին, այլ նաեւ կենդանական աշխարհին մէջ:

Անոնք նոխաղները դարձան, անմեղ դոհերը՝ որոնց շնորհիւ բիւրաւոր էակներու կեանքը պիտի փրկուէր:

Այդ օրերուն, քիչ թէ շատ ամէն երկրէ, կենդանեաց Պաշտպան Ընկերութեանց կողմէ բողոքի ձայներ կը բարձրանային, ու Փաստօտի գէմ նոր տեսակի խաչակրութիւն մը կը սկսէր:

Արդէն, ինչպէս որ տեսանք, Փաստօտ՝ գուցէ ամէն մարդէ աւելի՝ կը տառապէր խեղճ կենդանիներուն պարտադրուած ճակատագրէն, բայց ստիպուած էր զսպել իր յուզումը ու կատարել իր փորձերը, քանի որ նպատակը կ'արդարացնէր դործածուած միջոցը:

Այս մարդին մէջ, ինչպէս մարդկային միւս բոլոր ձեռնարկներուն մէջ, անբունաբարելի է յառաջադիմութեան պարտադրած օրէնքը. քայլ մը դէպի լոյս կարենալ յառաջանալու համար՝ խարխափումներու ընթացքին զոհեր պէտք է տալ. մի միայն այդ անողոր օրէնքին դնովն է որ

մարդիկ կրցած են իրենց լաւագոյն իտէալները իրականացնել:

Ուստի, դիտութեան այդ զոհերուն, դուժի եւ երախտիքի մեր պարտքը հատուցանելով հանդերձ, պարտինք ներդրամութեամբ հետեւել Փաստօտի հետագայ մեծ փորձերուն, որոնք մարդկութեան համար անսահման բարիքի մշտահոս աղբիւրներ դարձան:

Փաստօտի ենթադրութիւնը այս անգամ ալ կ'իրականանար. իրենց ուղեղէն կատաղութեան ժահով վարակուած կենդանիները փոխանակ մէկ ամիսէն՝ առ առաւելն երկու շաբաթէն, եւ որոշ պարագաներու մէջ միայն եօթը օրէն, կատաղութեան նշաններ ցոյց կու տային:

Այլեւս Փաստօտ ուղածին չափ կատաղած կենդանիներու հաւաքածոյ մը կադմելու լիճակի կ'ըլլար: Արդարեւ, պատկառելի թուով կատաղութենէ վարակուած շուներ եւ ճագարներ ունէր, որոնցմէ իւրաքանչիւրին մահուան օրը կանխաւ իրեն յայտնի էր:

Կարգը եկած էր այդ ահաւոր հիւանդութեան դարմանը գտնելով՝ մարդկութիւնը ազատել անոր պատուհասներէն:

Փաստօտ՝ շարադնին, հաւերու քոլեռալին եւ խոզերու հիւանդութեանց դարմանումին համար կիրարկած դրութիւնը որդեգրելով, տրամաբանութեան եւ ողջմրտութեան զմայլելի շաղկապումով ու հետեւողութեամբ՝ կը լուծէր այդ հարցն ալ:

Ան առաջին վայրկեանէն իսկ կը կռահէր, թէ կատաղութեան դարմանումին զաղտնիքը պէտք էր պատուաստումին մէջ փնտռել:

Ուստի, միւս հիւանդութիւններուն պատուաստը պատրաստած ձեւով, օրը օրին կատաղութենէ մեռած ճագարներու ուղնուղեղովը ջրային լուծոյթներ պատրաստելով, կը ձգէր որ օդին ազդեցութիւնը կրելով կորսնցնեն իրենց մահացու ոյ-

ժը, եւ ժամանակի տեւողութեամբ՝ դառնային անվնաս:

Ահա այդ պայմաններուն տակ պատրաստուած լուծոյթներովն էր որ կենդանիները պատուաստելէ ետք, կատղած շունէ մը խածնել կու տար, կամ անոնց ուղեղին մէջ կատղութեան ժահը կը ներարկէր, կարենալ ստուգելու համար պատուաստումին իրական արժէքն ու արդիւնքը:

Ան պատուաստումը կը կատարէր հետեւեալ կերպով. առաջին օրը՝ 14 օր առաջ կատղութենէ մեռած ճագարի մը ողնուղեղին լուծոյթը կը ներարկէր, երկրորդ օրը՝ 13 օրուան լուծոյթ մը, իսկ յաջորդ օրերուն՝ աստիճանաբար աւելի թունաւոր լուծոյթներ կը դործածէր, մինչեւ որ վերջին օրը՝ կատղութենէն նոյն օրն իսկ մեռած ճագարի մը ողնուղեղին լուծոյթը ներարկէր:

Փաստէօնի բոլոր ակնկալութիւնները կատարեալ յաջողութեամբ կ'իրականանային: Փորձի ենթակայ կենդանիներէն ոչ մէկը կը մեռնէր, եւ ոչ իսկ կատղութեան նշաններ ցոյց կու տար:

Վերջապէս պարտուած կարելի էր համարիլ կատղութիւնը: Այդ օրերուն Փաստէօնի հոգին անխառն ուրախութեամբ կը գեղուր:

Ան կը հրապարակէր իր զգայացունց գիւտը, ու կառավարութենէն կը խնդրէր որ հաճի յանձնարարութեամբ մը նշանակելով, ստուգել զայն:

Հանրային Կրթութեան նախարարութիւնը սիրով ընդ առաջ կ'երթար այդ առաջարկին, ու ականաւոր գիտնականներէ բաղկացած քննիչներու կը յանձնէր եղելութեան ստուգումը:

Փաստէօն, 1 Յունիս 1884-ին, քննիչ յանձնարարութիւններ կատարողութենէ մեռած շան մը ողնուղեղով կը վարակէր չորս շուններ եւ չորս ճագարներ, ուղեղային ներարկումներով:

Այդ չորս շուններէն եւ չորս ճագարներէն

ընէն երկուական հատ կանխաւ Փաստէօնի կողմէ պատուաստուած եւ արտադերձ եղած էին, իսկ մնացեալները՝ ոչ մէկ դարմանումի ենթարկուած էին:

Փաստէօն այս անգամ ալ պատգամելով հետեւեալ գուշակութիւնը կ'ընէր.

«Չպատուաստուած երկու շուններն ու ճագարները մօտաւորապէս 12-15 օրէն կատղութենէ պիտի վարակուին, իսկ արտադերձ եղողները՝ պիտի չվարակուին »:

Փաստէօնի այս յայտարարութիւնը ոչ անտախտ յաւակնութիւն էր եւ ոչ ալ ենթադրութիւն, այլ գիտական անաւարկելի ճշմարտութիւն: Արդարեւ, երկու ճագարները՝ 14 օրէն, իսկ երկու շուններն ալ՝ 17 օրէն կը կատղէին, մինչդեռ միւսները՝ արտադերձ կը մնային:

Քննիչները հետեւեալ տեղեկագիրը կ'ուղղէին Հանրային Կրթութեան նախարարութեան. «Ձեր տրամադրութեան տակ կը դնենք այս վկայագիրը, որպէսզի պարոն Փաստէօն իրաւասու ըլլայ զայն օգտագործելու Կոպենհագենի Միջազգային գիտական համաժողովին առջեւ ընելիք զեկուցման ընթացքին՝ պարզաբանելու համար իր ձեռք բերած սքանչելի արդիւնքները, որոնք մեծապէս պատիւ կը բերեն Փրանսական գիտութեան, ու մարդկութեան երախտագիտութենէն բոլոր խող նոր տիտղոս մըն ալ կը յաւելուն Փաստէօնի անուանը »: Իրապէս ալ, Փրանսական գիտութիւնն ու Փաստէօն, աննախընթաց փայլով կը փառաւորուէին այդ ժողովին մէջ:

Փաստէօնի կատարած փորձերը եւ պրպտումները այն աստիճանի ընդարձակուած ու ծաւալ ստացած էին, որ այլեւս կենսական պահանջ մը դարձած էր յարմար չէնքի մը գոյութիւնը, կարենալ պատրաստելու համար բազմաթիւ շուններն ու փորձի կենդանիները:

Փաստէօն մեծ դժուարութեամբ կը յաջողէր տիրանալ երեսի վրայ լքուած գըղ-

եակի մը: Խնդիրը՝ չէնք մը գտնելէն աւելի ժողովուրդին ընդգրկմութիւնն էր, որ արդելք կը հանդիսանար Փաստէօնի ձեռնարկին: Բոլորն ալ կը սարսափէին Փաստէօնի կատղած շուններու դրացնութենէն, ու պէսպէս խոչընդոտներով կ'արգիլէին անոնց տեղաւորումը:

Փաստէօնի հոգին ուրիշ մտահոգութենէ մը եւս կը փութորկէր: Մինչեւ հիմա կատարած բոլոր փորձերուն ենթակաները՝ կենդանիներ էին, արդեօք ներելի՞ էր իր նոր գիւտովը կատղած շուններէ խածնուած մարդիկն ալ դարմանել:

Անոր համար ահաւոր մղձաւանջ մը կը դառնար այս մտահոգութիւնը, ու մի միայն անբացատրելի մտային ու հոգեկան երկուցի մը տառապանքովը, կը յաջողէր լուծել այս հարցն ալ:

Փաստէօն այս մասին հետեւեալ խորհրդածութիւնները կ'ընէր. «Որչափ ալ որ բազմաթիւ օրինակներով ճշխացնուելով շուններուն պատուաստումով կատղութենէն արտադերձումը, ինձ կը թուի, թէ ձեռքս պիտի դողդալ, երբ առիթը ներկայանալու ըլլայ մարդկային էակի մը վրայ զայն ներարկելու»: Պահ մը իր զգայուն խղճի խայթը հանդարտեցնելու համար, խորհեցաւ մահապարտներու վրայ կատարել իր սկզբնական փորձերը, պայմանաւ որ եթէ արտադերձումը իրապէս յաջողուելու ըլլար՝ դատապարտեալը փրկուէր իր պատիժէն:

Արդարութեան ջերմեռանդ խնկարկուները համամիտ չգտնուելով այս առաջարկին, մերժեցին զայն:

Մահապարտի մը փոխարէն, 6 Յունիս 1885-ին, օր մը առաջ կատղած շունէ մը խածնուած Ժողէֆ Մէյսթըր անուանով արգասի ինը տարեկան տղեկ մը կը ներկայանար իրեն, մօրը ընկերակցութեամբ: Դպրոց գացած ատենը, կատղած շուն մը վրան յարձակելով, զայն գետին տապալելէ ետք, բազմաթիւ տեղերէ խածած էր:

Մայր ու տղայ, յոյսերնին Փաստէօնի վրայ դրած, փութով եկած մեծ գիտնականին դուռը ափ առած էին:

Հակառակ իր տարիքին պարտադրած անմեղութեանը, մահապարտ մըն ալ սա Մէյսթըրն էր: Ան դատապարտուած էր ամիսէ մը մեռնելու, ոչ թէ քաղաքակրթութեան հնարած արագաչարժ մեքենային հնձող հարուածին տակ, այլ մահերու ամենախիտ դուժէն ծնունդ առնող դաւաժաններու եւ պրկումներու առթած պէսպիսի չարչարանքներու արհաւիրքներէն ուժասպառ եղած:

Բնութիւնը պիտի ըլլար աւելի անողոք քան մարդիկ, մահապարտին պիտի դրժէր մինչեւ իսկ վերջին փափաքը՝ կատարելու իրաւունքը՝ զլանալով պապակը յագեցնող պուտ մը ջուրը, ու ան պիտի բաժնուէր այս աշխարհէն ումպ մը ջուրի կարօտովը հրակէզ:

Երկրպագունդին վրայ միակ մարդ մը կար, բարի ու ծերուկ դատաւոր մը, որ կարող էր Մէյսթըրը փրկել այդ դժոխային տառապանքներու արհաւիրքներէն... Այդ մարդը՝ Փաստէօնն էր:

Ան էր որ իր կենացը գնով, հետապնդած ու դրած էր փոքրիկ Մէյսթըրի կեանքին համրուած օրերը խամրեցնող ահաւոր թոյնը: Այդ ծերունին էր որ մարդկութեան անողոք թշնամիներէն մին իր որջին մէջ իսկ գտնելէ ետք, ճակատ ճակատի պայքարելով ու կռուելով, գետնաքարէ գետին տապալած, գինաթափ ըրած, ու իրմէ խլած գէնքերովն իսկ, չղթյալկապ ընելէ ետք, ընտելացուցած ու անմաս դարձուցած էր զայն:

Միթէ այդ բարի մարդը կրնա՞ր մերժել իր աջակցութիւնը խեղճ Մէյսթըրի, կըրնա՞ր որ եւ է առարկութեամբ խոյս տալ տաղնապահար մօր մը աղբիւսանքներէն: Մայր ու տղայ Ալլապէն վաղելով եկած, ու այժմ՝ գուրթ ու փրկութիւն կ'աղերսէին:

Պահեր կան, որոնց ընթացքին մէկ հատիկ մարդու մը կեանքը ա՛յնքան արժէքաւոր ու թանկագին կը դառնայ, որ համայն մարդկութիւնը իր գոյութիւնն իսկ կը վտանգէ զայն փրկելու համար. սպահեր ալ կան՝ ուր մարդկային ցեղը, կարծես զանգուածօրէն զգայազուրկ դարձած՝ լուրթեան ու անշարժութեան մէջ քարացած՝ անտարբերութեամբ, եւ երբեմն ալ հաճոյքով կը դիտէ բազմահազար մարդոց խողխողումը, առանց ձեռք կարկառելու, առանց քայլ մը իսկ յառաջանալու:

Տարօրինակ է մարդկային կեանքի դրնահատանքը. ան իր ելեւէջները ունի, ինչպէս սակարանը մէկ օրէն միւսը անմատչելի դառնալու աստիճան կը սղէ, ու վայրկեան մը ետք ա՛յնքան արժէքը կը կորսնցնէ որ զերոյի կը հաւասարի:

Վերջապէս ո՞վ էր Մէյսթըր... աղքատ ու խեղճուկ ընտանիքի մը զաւակը, կատաղութեան զոհ դացած բազմահազարներէն մէկը, անոնցմէ՝ որ հազիւ արեւուն լոյսը տեսած՝ զոհ կ'երթան պատահականութեան:

Միթէ կենդանիներու վրայ կատարուած բազմաթիւ դրական փորձերէ ետք, ներելի չէ՞ր առանց խղճահարութեան այս մանուկին ալ կիրարկել Փաստէօնի դիւտը: Նա մանաւանդ որ փրկութեան միակ յոյսն ու ապաւէնն էր պատուաստումը:

Ահա այս խորհրդածութիւններուն յաբուցած փոթորիկին մէջն էր որ կ'ալեկոծէր Փաստէօնի հոգին:

Նախ քան որ եւ է որոշումի մը յանդիւրը, ան պէտքը զգաց առանձնանալ իր խցիկին մէջ, ու երկար հսկումէ մը ետք, մնաց. նոյնքան անորոշ՝ որքան իր հոգեկան երկանցը սկիզբը:

Ճիշտ էր, փրկութեան ուրիշ յոյս չկար փոքրիկ Մէյսթըրի համար, բայց անակրնկալներով լի է բժշկութիւնը. կրնար պատահիլ որ կենդանիներուն ախտազերծումը մը ապահովող պատուաստը չյաջողէր

մարդերու քով, ու մինչեւ իսկ վատթարացնէր դրութիւնը: Բացի այս նկատումէն, ուրիշ պարագայ մըն ալ կար որ սատարիկ կերպով կը խուռլէր Փաստէօնի հոգին:

Փաստէօն հիւանդին տարիքը նկատի ունենալով, իր հոգեկան տագնապը կը տասնապատուէր, որովհետեւ այս դիտնականին համար երեխան կատարեալ սրբութիւն մըն էր, որուն մասին հետեւեալ կերպով կ'արտայայտուէր. « Երբ երեխայի մը կը մօտենամ, ան ինծի երկու տարբեր զգացումներ կը ներշնչէ, ներկային համար՝ դուրգութեան, իսկ ապագային համար՝ իր ըլլալիքին յարգանքը »:

Իրապէս ալ Փաստէօն կը պաշտէր երեխաները, իր դուրգութեանքովն ու նուէրներովը միշտ սիրցնել զիտէր ինքզինքը անոնցմէ:

Փաստէօն՝ սիրոյ, դուրի եւ անորոշութեան զգացումէն խթանուած՝ կը դիմէր երկու ականաւոր բժիշկներու խորհուրդին:

Անոնցմէ մէկը՝ տղթ. Կռանչէն էր, միւսը՝ պրոֆ. Վիւրեանը: Այս երկու պարկեշտ դիտնականները Մէյսթըրի պարագան ուշի ուշով քննելէ ետք, առանց տատամսումի կը քաջալերէին Փաստէօնը որ անմիջապէս պատուաստումի սկսի: Նոյն երեկոյեան, Փաստէօն սարսափահար եղած, կը համբուրէր փոքրիկ հիւանդը, ու կը ներարկէր ողնուղեղի լուծոյթը...: Մինչեւ վերջին ներարկումը՝ փոքրիկ հիւանդը անհասկնալիութեան ոչ մէկ նշան ցոյց կու տար: Արդեօք անվտանգ պիտի անցնէ՞ր սա վերջինն ալ... ամենաթունաւորը:

Փաստէօն իր կեանքին դերադոյն պահերէն մէկը կ'ապրէր այդ օրը: Տասը օրէ ի վեր ո՛չ կանոնաւոր սնունդ կ'առնէր եւ ոչ ալ կը քնանար, իսկ վերջին ներարկման օրը՝ իր ջգագրգռութիւնը դադաթնակէտին կը հասնէր:

Ան իր խցիկը քաշուելով հետեւեալը կը դրէր իր զաւակին. « Հաւանական է որ այս պահուս՝ դարուս բժշկական ամենամեծ զէպքերէն մէկը տեղի կ'ունենայ, եւ պիտի ցաւիս որ ականաւոր չես »: Օրերը կ'անցնէին անվրդով. Փաստէօն քաջալերուած այս դոյալիճակէն՝ Յունիս 16-ին, առ ի զգուշութիւն, յաւելեալ ներարկում մը եւս կ'ընէր: Երեխան անձամբ կերակրելէ ետք, զայն կը յանձնէր պրոֆ. Կռանչէի խնամքներուն, ու մօտակայ դիւղ մը կը մեկնէր, իր զրգուած ջիւղերը հանդարտեցնելու համար:

Հիւանդին բարի լուրերը օրը օրին կը հաղորդուէին Փաստէօնի, ամէն ինչ կանոնաւոր կ'ընթանար: Յունիս 27-ին Մէյսթըր մօրը հետ ծննդավայրը կը վերադառնար:

Մէյսթըրի բուժումը առաջին փաստը կը հանդիսանար, թէ կատաղութիւնը այլ եւս պարտուած էր:

Այդ օրէն մինչեւ ներկայիս՝ դարմանումի դրութիւնը կը մնայ անփոփոխ: Սերունդէ սերունդ, հազարաւոր Մէյսթըրներ կու գան ու կ'երթան, ու անոնց կեանքը կը փրկուի շնորհիւ աշխարհիս չորս կողմը սփռուած փաստէօնեան հաստատութիւններուն:

Փաստէօնի ձեռքով դարմանուած երկրորդ հիւանդը Ժիւրիյ անունով 15 տարեկան հոլիւ մըն էր:

Իրմէ աւելի փոքր ուրիշ հինգ ընկերներով ոչխարները արածած պահուն, կը տեսնէր լորձուքը բերնէն վազող խոշոր շուն մը, որ արագօրէն եւ վճռականօրէն զէպի իրենց կ'ուղղուէր:

Ժիւրիյ քաջաբար առաջ նետուելով կը դիմաւորէր կատաղած կենդանին, մահու եւ կենաց գիւրկընդխառնումի մը ընթացքին բազմաթիւ ծանր խաճուածքներ կը ստանար, եւ արիւնթաթախ վիճակի մէջ՝ կը յաջողէր ոչ միայն ընկերներուն պատ-

ուար հանդիսանալ, այլ նաեւ կը խեղդէր զազանը:

Այս քաջ հոլիւն ալ Փաստէօնի կը դիմէր դարմանութեան համար: Մէյսթըրի դարմանութենէն ի վեր երեք ամիս անցած ըլլալուն, Փաստէօն այլեւս առանց մտահոգութեան կը դարմանէր ու կը փրկէր Ժիւրիյն ալ: Այլեւս ամբողջ աշխարհի ծանօթ էր Փաստէօնի դիւտը:

Հեռաւոր Ռուսաստանէն, ու մինչեւ իսկ Ամերիկայէն բազմաթիւ հիւանդներ կու գային դարմանութեան համար:

Այս պայմաններուն մէջ շատ պարզ էր որ իր տրամադրութեան տակ զտնուած չէնքն ու կազմուածքը անբաւական պիտի հանդիսանային դոհացում տալու համար յարաճուն դիմումներուն, որով Փաստէօն կ'որոշէր հանրային երախտիքին դիմել, կառուցանելու համար երկար տարիներէ ի վեր երազած դիտական հաստատութիւնը, որուն արդարօրէն իր անունը պիտի տրուէր:

Գիտութեան ու Բժշկական Կաճառները ողբերգութեամբ Փաստէօնի վերջին մեծ դիւտէն, նախաձեռնարկ կը հանդիսանային այդ զեղեցիկ գաղափարին իրագործման, ու յանձնախումբ մը կազմելով՝ դիմում կ'ընէին համայն մարդկութեան խղճին:

Լիարժեքն ու սրտաբուխ կերպով կը տեղային նուիրատուութիւնները ամէն կողմէ, ու կարճատեւ ժամանակի մ'ընթացքին կը հաւաքուէր 2.586.680 Փրանքի պատկառելի գումար մը, որուն 200 հազար Փրանքը Փրանսական կառավարութեան նպաստն էր, իսկ մնացեալը՝ ամէն աղղի եւ ամէն դասակարգի մարդոց սրտէն բղխած նուէրներովը կը գոյանար:

Իրենց նիւթական բաժինը կը բերէին՝ Ռուսիոյ ցարը, Պարսկիոյ կայսրը, Պոլսոյ սուլթանը եւ շատ մը ուրիշ օտարազգի նուիրատուներ: Փաստէօնեան հաստատութեան ամբողջական շինութիւնը պիտի շարժէր 1.563.786 Փրանք, որով մէկ մի-

լիոնէ աւելի դումար մը տրամադրելի կը մնար, չարունակելու համար հետադայի գիտական պրպտումները:

Փաստէօն, Ռու, Շամպեոլան ալ իրենց կարգին, այդ ձեռնարկին կը յատկացնէին զանազան պատուաստներու գործածութեանէն զոյացած դումարները, օժտելով այսպէս իրենց հաստատութիւնը պահեստի պատկառելի գումարով մը, որ պիտի նըպաստէր Ռուի կողմանէ՝ կեղծմաշկի պատուաստը գտնելու, Իէրսէնի կողմէ՝ ժանտախտին մանրէն երեւան հանելու, Մէնիքօֆի կողմէ՝ արեան ճերմակ գընդիկներու պահապանի դերը ճշդելու, եւ այլն:

Այդ գիտական տաճարին կառուցումէն ետք՝ բացման օրը՝ Փաստէօն իր խօսքը այդ հաստատութեան յանձնախումբին նախագահին՝ Ժոզէֆ Պերթրանի ուղղելով կ'ըսէր. « Կառուցուեցաւ վերջապէս այն մեծ շէնքը, որուն շինութեան համար գործածուած քարերէն կարելի է ըզի չկայ մէկ հատը, որ չըլլայ նիւթականացած խորհրդանիշը սրտաբուրդի մտածումի մը: Ամէն տեսակի առաքելութիւնները իրենց բաժինը բերած են կանգնելու համար աշխատութեան այս սրբալիայը»:

« Աւա՛ղ, դառնագոյն մեղամաղձոտութեամբ համակուած ներս կը մտնեմ այդ տեղ, ժամանակին ազդեցութենէն պարտուած մարդու մը հանգամանքով, որ չունի այլեւս իր բոլորտիքը իր դաստիարակներէն ոչ մէկը, եւ ոչ իսկ իր պայքարի ընկերներէն՝ Տիւման, Պուլէյը, Փօլ Պեռը եւ Վիւրեանը: Այն Վիւրեանը, որ ձեզի հետ, սիրելի Կոանչէ, սկիզբի օրերու խորհրդատուն կը հանդիսանար, ինչպէս նաեւ ամենահաւատարմը ու ամենակորովի պաշտպանը կարգ ու կանոնով հետապնդուած պրպտումներու»:

«Որքան ալ որ դառնակսկիծ վշտով համակուած եմ յայտարարելու, թէ այլեւս չկան անոնք՝ որ արխարար մասնակից ե-

ղան բոլոր այն վիճարանութիւններուն, որոնք երբեք ես չյարուցի, այլ թիրախը հանդիսացայ, որքան ալ որ անոնք այլեւս վիճակի չեն լսելու թէ ինչե՛ր կը պարտիմ իրենց խորհուրդներուն եւ աջակցութեանը, եւ որքան ալ որ իրենց բացակայութենէն զգացած թախիծս նուազ բուռն չէ իրենց մահուան յաջորդ օրը զգացածէս, դոնէ այն միւլթարութիւնը ունիմ, խորհելով թէ՛ այն ամէնը որ միասնաբար պաշտպանեցինք՝ պիտի չկորսուի »:

Փաստէօն շարունակելով իր խօսքը, որ ապագային փոխանցուելիք տեսակ մը կը տակ էր, կը յարէր. « Սիրելի գործակիցներս, անվթար պահեցէ՛ք այն ողբերգութիւնը, որմէ համակուեցաք առաջին ժամէն իսկ, բայց անոր անբաժան մէկ ընկերը նկատեցէ՛ք երեւոյթներուն խստաբարոյ ստուգումը: Մի՛ հրապարակէք բան մը, որ կարելի չըլլայ պարզօրէն եւ վրձնականօրէն ապացուցանել »:

«Քննադատական ոգիին պաշտամունքը ունեցէ՛ք: Առանձինն՝ ոչ գաղափարներու բեղնաւորիչ մըն է եւ ոչ ալ մեծ ձեռնարկներու խթանող մը: Բայց առանց անոր ալ՝ ամէն ինչ դիւրաբեկ է: Միշտ անոր վիճակուած է վերջին խօսքը: Այս պահանջս, որ դուք ալ պիտի բանաձեւէք ձեր պատրաստելիք սերունդին, գիտարարին կողմէ գործադրուելիք ամենադժուարին բանն է»:

«Հաւատացած ըլլալ թէ գիտական կարեւոր գիւտ մը կատարած էք, զայն հրապարակելու տենդէն համակուած ըլլալով հանդերձ, զսպել ձեզ օրեր, շաբաթներ, եւ երբեմն ալ տարիներ շարունակ պայքար մղելով դուք ձեզի դէմ, ձգնիլ կործանել ձեր անձնական փորձերու վաւերականութիւնը, եւ ձեր գիտը հանրութեան սեփականութիւնը դարձնել միայն այն տեսն՝ երբ սպառած կ'ըլլաք անոր հակադրուելիք ամէն տեսակի վարկածները. ահա ա՛յս գործելակերպն է որ դժուարին ձեռնարկ մըն է»:

«Բայց ա՛յդքան ճիշդիւ էտք, երբ մէկը կը տիրանայ բացարձակ ստուգութեան, ան կ'ըմբռնէ մարդկային հոգիին վերապահուած հաճոյքներէն մեծագոյնը, եւ այն մտածումը՝ թէ անով պիտի կարենայ նպաստել իր երկրին վարկին, շատ աւելի քաղցր կը դարձնէ զայն»:

«Եթէ գիտութիւնը չունի հայրենիք, գիտութեան մարդը պարտի հայրենիք մը ունենալ, եւ անոր պէտք է փոխանցէ այն բարեբար ազդեցութիւնը, որ իր նուաճումները կարող են ապահովել աշխարհիս վրայ»:

«Տիար նախագահ, եթէ թոյլ տրուէր ինձ վերջացնել ըսելիքս իմաստասիրական խորհրդածութիւնով մը՝ թելադրուած ձեր ներկայութենէն աշխատանքի այս սրահին մէջ, պիտի յայտարարէի՝ թէ այսօր այնպէս կը թուի, թէ երկու հակամարտ օրէնքներ իրարու դէմ կը պայքարին: Մէկը՝ արիւնով ու մահով կը սնի, եւ օրը օրին մարտական նոր միջոցներ յղանալով կը ստիպէ որ ժողովուրդները շարունակ պատրաստ ըլլան կռուի դաշտ նետուելու, եւ ուրիշ մը՝ խաղաղութեան, աշխատութեան եւ ապահովութեան արգասիքը եղող, որուն միակ նպատակն է ձերբազատել մարդը զինքը չընկալաւոր արհաւիրքներէն»:

«Մէկը՝ մի միայն բռնի ուժով կատարուելիք նուաճումներու հետամուտ է, մինչդեռ միւսը կը ջանայ մարդկային տառապանքը մեղմացնել: Այս վերջինին համար մարդու մը կեանքը գերադասելի է ամէն տեսակի յաղթանակներու, իսկ միւսը՝ պատրաստ է մարդու մը սնուի ցանկութիւններուն դժգոհում տալու համար, զոհել հարիւր հազարաւորներու կեանքը: Այն օրէնքը, որուն գործադիրներն ենք մենք, կը ջանայ մինչեւ իսկ խողխողումի արհաւիրքներուն մէջէն դարմանել արիւնով սնող չարիքները, այդ պատերազմապաշտ օրէնքին»:

«Մեր յանձնարարած հակառակիչ միջոցներով կատարուած վերադարձանումները կրնան հազարաւոր զինուորներու կեանքը փրկել»:

«Այս օրէնքներէն ո՞ր մէկը պիտի յաղթանակէ: Միայն Աստուած գիտէ: Բայց բան մը կայ որ կարող ենք անվերապահօրէն հաստատել՝ այդ ալ Փրանսական դիտութեան, մարդկային այդ օրէնքին եւ թարկուելով թափած ջանքերն են կեանքը երկարաձգելու»:

Հէ՛ղ Փաստէօն, մօտաւորապէս վաթսուն տարիներ անցած են այդ հոգեւոր խօսքերէն ի վեր, երկու անգամ աշխարհը բռնկեցաւ, հրոյ ճարակ դարձաւ, սուրն ու աւերը մուտ գործեցին ամէն տունէ ներս, արտասուքի գետերով ողողուեցան հայրենի անդատոանները, ու տակաւին մարդիկ չզգաստացան:

Մարդկութիւնը խելայեղ թափով մը կը շարունակէ զինուել, գիտնականները մինչեւ իսկ, որոնց աստուածային կոչումն է քիչ մը բարիք ու միւլթարութիւն սերմանել, այսօր լքած են քու որդեգրած ուղիդ ու անցած են պատնէշին միւս կողմը, կը տոր մը հացի համար անվրդով լքած են իրենց միտքն ու հոգին, ու չքեղ տարրալուծարաններու մէջ բազմած՝ իրենց իմացական կարողութիւնները կը սպառեն ո՛չ թէ հիւանդութեանց ու թշուառութեան դէմ մաքառելու համար, այլ քանդիչ ու կործանարար ոյժերու գեհնական արհաւիրքները չղթալազերծելու:

Աւա՛ղ, անցած է քրիստոնէատիպ Փաստէօններու շրջանը, ու կ'ապրինք այնպիսի օրեր՝ ուր քանդումի եւ կործանումի օրէնքն է որ կը գերակայէ:

Բայց հակառակ ներկայի տխուր դոյա-վիճակին, պէտք է յուսալ ու Փաստէօնի ձայնակցելով բացազանչել՝ թէ վերջ ի վերջոյ « գիտութիւնն ու խաղաղութիւնը պիտի յաղթանակեն տգիտութեան եւ պատերազմին, եւ ժողովուրդները իրարհաս-

